

ՄԻԶՆԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱԿԻԹ ԴԻԱՆՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
ֆինանսների և էկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ ԵՎ ԴՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերջին տասնամյակներում աշխարհում մեծ թափ են ստացել տարածաշրջանային միասնացման գործընթացները՝ ընդգրկելով նորանոր մեծ ու փոքր պետություններ: Ինտեգրվող երկրների շարժառիթները և սպասումները այսպիսի գործընթացներից բազմաթիվ են: Սրանով պայմանավորված՝ երկրները միասնացման ինստիտուցիոնալ ձևերից առանձնացնում են նախընտրելին:


Ինտեգրման մոդելների սոցիալ-տնտեսական ազդեցությունն (*welfare effects*) ուսումնասիրելու համատեքստում, որպես ելակետ, հիմնականում ընտրվում են դեռևս նախորդ դարի կեսերին տնտեսագետ Զ. Վայների առաջարկած երկու ձևակերպումները՝ «Առևտրի ստեղծումը» և «Առևտրի շեղումը» (*diversion*): Ըստ այդմ՝ աշխատանքում քննարկվում են արտոնյալ տնտեսական ինտեգրման սոցիալ-տնտեսական հետևանքները՝ օգտագործելով արտոնյալ ազատականացման (*preferential liberalization*) մի քանի մոդելներ:

Հիմնաբառեր. տնտեսական ինտեգրացիա (միասնացում), տարածաշրջանային առևտրային համաձայնագիր, առևտրի ստեղծում, առևտրի շեղում, բարեկեցության ազդեցություններ, սոցիալ-տնտեսական հետևանքներ, մաքսային միություն, ազատ առևտրի գոտի, արտոնյալ առևտրային պայմանագրեր

JEL: I31, R59, F40, F13, F15

Համաաշխարհային տնտեսության ժամանակակից շրջանն առանձնանում է տարածաշրջանային ակտիվ միասնացման գործընթացներով: Երկրները միավորվում են՝ համատեղ դիմագրավելու արդի փոխշաղկապված տնտե-

սության մարտահրավերները: Եվրոպական միության էվոլյուցիան և գրանցած հաջողություններն ապացուցեցին տնտեսական միասնացման կարևորությունը պետությունների տնտեսական առաջընթացի և բարեկեցության համար: Ինտեգրման գործընթացներն աշխարհում սրընթաց վերելք ապրեցին հատկապես 1990-ականներից, և արդեն 2015-ի ավարտին աշխարհում հաշվվում են շուրջ 267 տարատեսակ տարածաշրջանային առևտրային համագործակցության ձևեր (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի էվոլյուցիան 1948-2016 թթ.¹

Գրականության մեջ առկա են տարածաշրջանային տնտեսական ինտեգրման դասակարգման մի շարք մոտեցումներ: Առավել դասական մոտեցմամբ² տնտեսական միասնացման ձևերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- արտոնյալ առևտրային համաձայնագիր,
- ազատ առևտրի գոտի (արտոնյալ առևտրային համաձայնագիր + զրոյական ներքին մաքսատուրք),
- մաքսային միություն (ազատ առևտրի գոտի + միասնական արտաքին առևտրային քաղաքականություն),
- ընդհանուր շուկա (մաքսային միություն + արտադրական գործոնների ազատ շարժ),
- տնտեսական միություն (ընդհանուր շուկա + միասնական տնտեսական քաղաքականություն):

Եվրասիական տարածաշրջանում նույնպես տեղի են ունենում միասնացման գործընթացներ, և Հայաստանի Հանրապետությունն անմասն չէ այդ գործընթացներից. մեր պետությունը 2015 թ հունվարի 2-ից անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը: Եվրասիական տնտեսական միասնացման միտումները և ընձեռնած հնարավորությունները հասկանալու համար

¹ World Trade Organization, Regional Trade Agreements: Facts And Figures, WTO Secretariat: <https://www.wto.org/english/tratop_e/region_e/regfac_e.htm>

² Տե՛ս **Balassa B.**, The Theory of Economic Integration» (Richard D. Irwin, Homewood IL). 1961. **Salvatore D.**, Chapter 10 Economic Inegration: Customs Unions and Free Trade Areas. International Economics, 7th, Seventh Edition, New York, 2001, էջ 327:

պետք է հաշվի առնել հիմնահարցի վերաբերյալ առկա տեսական բազան: Տնտեսագիտական մի շարք մոդելների ուսումնասիրությունը կստեղծի բարենպաստ տեսական հիմք՝ մասնագիտորեն ուսումնասիրելու միասնացման հետևանքները երկրների տնտեսության զարգացման և բարեկեցության առումներով:

Հիմնախնդրի վերաբերյալ հիմնարար աշխատությունների թվում, որպես դասական տեսական նյութ, առանձնանում է Վայների «Մաքսային միության հիմնահարցը» աշխատությունը (1950), որում հեղինակը շարադրում է արտոնյալ ազատականացման (preferential liberalization) էությունը և դրա սոցիալ-տնտեսական հետևանքները³:

Տարածաշրջանային տնտեսական համագործակցության ազդեցությունը երկրի վրա ուսումնասիրելու նպատակով Վայները դիտարկում է արտոնյալ ազատականացման տարբեր դեպքեր, մասնավորապես՝ արտոնյալ առևտրային համաձայնագիրը և մաքսային միությունը: Նրա սահմանմամբ՝ արտոնյալ առևտրային համաձայնագիրն առևտրային բլոկ է, որը մասնակից այլ պետություններին որոշակի ապրանքների ներմուծման արտոնյալ իրավունք է տալիս: Դա տեղի է ունենում առկա մաքսատուրքերն ու այլ սահմանափակումները կրճատելով կամ վերացնելով: Մաքսային միությունը առևտրային համաձայնության ձև է, որը բաղկացած է ազատ առևտրի գոտուց՝ ընդհանուր արտաքին մաքսատուրքով:

Հիմնահարցի վերաբերյալ Վայների թերևս ամենահայտնի թեզը առևտրային արտոնյալ ազատականացման՝ «առևտրի ստեղծման» և «առևտրի շեղման» հետևանքներին է վերաբերում: Տարածաշրջանային առևտրային համագործակցության արդյունավետությունը և նպատակահարմարությունը, այլ ցուցիչների թվում, այժմ էլ գնահատվում է տնտեսական ինտեգրման արդյունքում առևտրի ստեղծմամբ և առևտրի շեղմամբ:

Առևտրի ստեղծումը տեղի է ունենում այն դեպքում, երբ հայրենական արտադրանքը Մաքսային միության անդամ երկրում փոխարինվում է մեկ այլ անդամ երկրից ներմուծվող ավելի էժան ապրանքով: Ենթադրելով, որ մինչև Մաքսային միության ստեղծումը և դրանից հետո տնտեսական ռեսուրսներն ամբողջությամբ զբաղված են, առաջարկի փոխարինումը կհանգեցնի անդամ երկրների բարեկեցության աճին, քանի որ դա խթանում է երկրների մասնագիտացումը՝ հիմնված երկրների հարաբերական առավելության վրա: Առևտուր ստեղծող մաքսային միությունը բարձրացնում է նաև ոչ անդամ պետությունների բարեկեցության աստիճանը, քանի որ իր իրական եկամուտների աճը (մասնագիտացման շնորհիվ) նպաստում է մնացյալ աշխարհից ներմուծման աճին:

Առևտրի շեղումը, մյուս կողմից, տեղի է ունենում, երբ Մաքսային միության անդամ չհանդիսացող երկրից ավելի ցածր գնով ապրանքի ներմուծումը փոխարինվում է նույն ապրանքի ավելի թանկ ներմուծմամբ միության անդամ երկրից: Սրա դասական օրինակը Միացյալ Թագավորության՝ եվրոպական միասնական շուկա մուտքն էր 1973-ին՝ ընդունելով միասնական արտաքին մաքսատուրքը: Արդյունքում՝ Նոր Զելանդիայից կաթնամթերքի և բրդի ներմուծումը սկսեց իրականացվել միասնական շուկայի անդամ երկրներից:

³ St'u Viner J., The Customs Union Issue (Carnegie Endowment for International Peace, New York), 1950:

Առևտրի շեղումը նվազեցնում է բարեկեցության մակարդակը, քանի որ շեղում է արտադրությունն ավելի արդյունավետ միությունից դուրս գտնվող արտադրողներից դեպի ավելի պակաս արդյունավետ միության ներսում գտնվող արտադրողներ⁴:

Այսպիսով՝ առևտրի շեղումը վատթարացնում է միջազգային ռեսուրսների տեղաբաշխումը և զրկում արտադրությունը հարաբերական առավելությունից: Ոչ անդամ երկրների բարեկեցության աստիճանը կնվազի, քանի որ տնտեսական ռեսուրսները կարող են օգտագործվել միայն ավելի ցածր արդյունավետությամբ, քան մինչև առևտրի շեղումը:

Վայներն իր պնդումները ներկայացրել է տեսականի ըմբռնողական մակարդակում և չի տվել իր գաղափարների մաթեմատիկական ձևակերպումները, ուստի «առևտրի ստեղծում» և «առևտրի շեղում» հասկացությունները հետագայում զանազան մեկնաբանությունների առիթ են դարձել⁵:

Հիմնահարցը լավագույնս ներկայացրել է Նոբելյան մրցանակակիր Լ. Միդն իր հանրահայտ «Մաքսային միությունների տեսությունը» գրքում⁶, որում համակողմանի վերլուծվում է նաև Վայների տեսությունը արտոնյալ ազատականացման և երկրների բարեկեցության վրա դրա ազդեցության մասին: Միդն իր վերլուծությունները պատկերում է՝ օգտվելով «NICNIR» (No Imperfect Competition and No Increasing Revenues (հայերեն՝ անկատար մրցակցության բացակայություն և աճող եկամտի բացակայություն) գործիքակազմից, որը ստեղծել են Փ. Սամուելսոնը, Ք. Էրոն, Ջ. Միռլսը և Ջ. Միդը⁷:

Մասնավորապես՝ ըստ Միդի առաջարկած մաքսային միության մոդելի՝ պայմանականորեն գոյություն ունի երեք երկիր՝ «Տուն երկիր» (ՏԵ), «Գործընկեր երկիր» (ԳԵ), «Մնացյալ աշխարհ» (ՄԱ): Ընդունվում է, որ ԳԵ-ն և ՄԱ-ն իրենց բոլոր տվյալներով նույնական են: ՏԵ-ն ԳԵ-ից և ՄԱ-ից ընդունում է նմանօրինակ արտադրանք:

Սկզբում դիտարկենք այն դեպքը, երբ ՏԵ-ն ԳԵ-ի հետ կնքում է Արտոնյալ առևտրի համաձայնագիր (գծապատկեր 2):

Արտոնյալ առևտրի համաձայնագրի սոցիալ-տնտեսական հետևանքները հաշվարկելիս առանձնացվում են առևտրի ծավալի (trade-volume effects) և սահմանային գնի ազդեցությունները (border price effects), մասնավորապես՝ ՏԵ-ի, ԳԵ-ի և ՄԱ-ի համար:

ԳԵ-ն կրում է դրական սահմանային գնի և դրական ծավալի ազդեցությունները, քանի որ ավելի բարձր գնով արտահանում է ավելի շատ ապրանք (D հատվածը): ՄԱ-ն կրում է բացասական սահմանային գնի և բացասական առևտրային ծավալի ազդեցությունները (E հատվածը) հակառակ պատճառներով, քանի որ ստանում է ավելի ցածր գին և վաճառում է ավելի քիչ: ՏԵ-ի համար արտոնյալ ազատականացման սոցիալ-տնտեսական ազդեցությունները հաշվելն ավելի բարդ է, քանի որ ունի երկակի ազդեցություն սահմանային գնի վրա: Ներկրումների աճը բարձրացնում է ՏԵ-ի բարեկեցության


⁴ Տե՛ս **Pomfret R.**, The Economics of Regional Trading Arrangements, Oxford University Press Inc., New York, 1997, էջ 180:

⁵ Տե՛ս **Lipsey Richard G.**, The Theory of Customs Unions: Trade Diversion and Welfare. *Economica*, 24 (93), (Feb., 1957), էջ 40–46: <http://www.jstor.org/stable/2551626>: **Collier Paul**, The Welfare Effects of Customs Union: An Anatomy. *The Economic Journal*, 89 (353), (Mar., 1979), էջ 84–95: <<http://www.jstor.org/stable/2231408>>

⁶ Տե՛ս **Meade James E.**, The Theory of Customs Unions; Amsterdam; North-Holland, 1955:

⁷ Տե՛ս **Baldwin R., Wzplosz C.**, The Essential Economics of Preferential Liberalisation, The Economics of European Integration, 2012, Chapter 5, էջ 5–2:

մակարդակը (A հատվածը, որը ներմուծված բոլոր լրացուցիչ միավոր ապրանքների հանրագումարն է): Հետևաբար՝ ՏԵ-ն կրում է դրական առևտրի ծավալի ազդեցություն:



MS՝ ներմուծման առաջարկը, MD՝ ներմուծման առաջարկը, XS^R ՝ արտահանման առաջարկը ՄԱ-ից, XS^P ՝ արտահանման առաջարկը ԳԵ-ից, P' ՝ ապրանքի գինը, X^R ՝ ներմուծումը ՄԱ-ից, X^P ՝ ներմուծումը ԳԵ-ից, T' ՝ հարկը, $P-T'$ ՝ ապրանքի գինը մինչև հարկումը, D' ՝ ԳԵ-ի օգուտը, A' ՝ ՏԵ-ի օգուտը ներկրումների աճից, B' ՝ ՏԵ-ից օգուտը գնի իջեցումից, C' ՝ ՏԵ-ի կորստի չափը:


Գծապատկեր 2. Արտոնյալ ազատականացման սոցիալ-տնտեսական հետևանքները

Սահմանային գնի ազդեցությունը ցույց է տալիս, թե որքան ավելի կամ պակաս է ՏԵ-ն վճարում ապրանքի համար, որը գնում էր արտոնյալ առևտրի համաձայնագրից առաջ: Մինչև արտոնյալ առևտրի համաձայնագիրը, դեպի ՏԵ ներմուծումների (M') մի հատվածը կատարվում էր ՄԱ-ից (X^R): Համաձայնագրից հետո ՄԱ-ից ներմուծումը կրճատվում է (X^R), ներմուծման ավելի խոշոր ծավալների պայմաններում (M'') ներմուծման մնացած հատվածը ստացվում է ԳԵ-ից (X^P): ՄԱ-ից եկող ապրանքների գինը նվազում է, ուստի ՏԵ-ն սրանից օգուտ է ստանում: Օգուտի որոշակի չափը հենց ներմուծման այն քանակն է, որը կրում է գնի իջեցման ազդեցությունը (B հատվածը): Ավելի ցածր գինը նպաստում է ներմուծված ապրանքի ավելի մեծ սպառման՝ ըստ այդմ հանգեցնելով ավելի մեծ սպառողական ավելցուկի: Միդն այս երևույթն անվանում է «առևտրի ընդլայնում»⁸: ԳԵ-ից եկող ապրանքների գինը բարձրանում է, ուստի ՏԵ-ն կորուստ է կրում (C հատվածը): Արդյունքում՝ ՏԵ-ի համար սոցիալ-տնտեսական հետևանքները կամ օգուտը առևտրի ազատականացումից հավասար կլինեն՝ $A+B-C$:

Երկրորդ դեպքը վերաբերում է մաքսային միություններին: Այս պարագայում ևս ՏԵ-ն ներմուծման համար ստանում է սովորական $A+B-C$ հատվա-

⁸ Տե՛ս **Pomfret R.**, The Economics of Regional Trading Arrangements, Oxford University Press Inc., էջ 182:

ծը (գծապատկեր 3): Մաքսային միության դեպքում սոցիալ-տնտեսական հետևանքներն ընդգրկում են նաև արտահանումը դեպի ՊԵ և հակառակը, քանի որ արտոնյալ ազատականացումը փոխադարձ է: Ուստի ՏԵ-ն, որպես սոցիալ-տնտեսական հետևանք, ստանում է նաև ՊԵ արտահանվող ապրանքի բարձր գնի օգուտը (D հատվածը): Նույնպիսի սոցիալ-տնտեսական հետևանքներ է կրում նաև ՊԵ-ն:



Գծապատկեր 3. Մաքսային միության դեպքը և սոցիալ-տնտեսական հետևանքները

Գծապատկերում առևտրի գնի կորուստը (C հատվածը) ավելի մանրամասն ներկայացնելու համար դա բաժանում ենք երկու հատվածի (C_1 և C_2): C_1 հատվածը ցույց է տալիս, թե որքան է երկիրը վճարում ամեն միավորի համար, որ շարունակում է գնել ՊԵ-ից: Արտահանման ավելի բարձր գնից ՏԵ-ի կորուստը (C_1) փոխանցվում է ՊԵ-ին: Սակայն մաքսային միության դեպքում C_1 -ի կորուստները փոխհատուցվում են D_1 -ով, երբ ՏԵ-ն արտահանում է իր արտադրանքը դեպի ՊԵ: Ինչ վերաբերում է C_2 -ին, ապա դա առաջարկի փոփոխության գինն է, ուստի չի կարող փոխհատուցվել արտահանման օգուտով:

Ի վերջո, կարելի է ասել, որ ՏԵ-ի սոցիալ-տնտեսական հետևանքները կամ օգուտը մաքսային միությունից կկազմեն $A+B+D_2-C_2$ արդյունքը: Սակայն այս հետևանքը նույնպես կարող է բացասական լինել առևտրի շեղման պարագայում: Այնուամենայնիվ, հասկանալի է, որ սոցիալ-տնտեսական հետևանքները մաքսային միության դեպքում ավելի դրական են, քան ՊԵ-ի հետ արտոնյալ ազատականացումը⁹: Ինչ վերաբերում է ՄԱ-ին, ապա այս պարագայում դրա կորուստները կրկնակի են, քանի որ կորցնում է արտահանման ծավալները թե՛ ՏԵ-ում, թե՛ ՊԵ-ում:

Մինչ առևտուր ստեղծող մաքսային միությունները նպաստում են միայն առևտրի ստեղծմանը և միանշանակորեն բարձրացնում անդամ և ոչ անդամ երկրների բարեկեցության աստիճանը, առևտուրը շեղող մաքսային միությունները հանգեցնում են առևտրի և՛ ստեղծմանը, և՛ շեղմանը, ինչպես նաև կարող են բարձրացնել կամ իջեցնել անդամ երկրների բարեկեցության մակարդակը, իսկ ՄԱ-ի բարեկեցությունը, ըստ այս մոդելի, նվազում է:

⁹ Տե՛ս **Hawtrey R.**, The Theory of Customs Unions. by J. E. Meade, Reviewed work. Review by Ralph Hawtrey, The Economic Journal, 66 (262), Jun., 1956, էջ 337-339:
<<http://www.jstor.org/stable/2227983>>, էջ 338:

Կարող ենք փաստել՝ առևտրի ստեղծումը տեղի է ունենում այն դեպքում, երբ մաքսային միության անդամների միջև մաքսատուրքերի վերացումը հանգեցնում է նրան, որ անդամ երկիրը գնում է արտադրանքը այլ անդամ երկրից՝ ավելի բարձր գնով արտադրելու փոխարեն: Առևտուրը պետք է շեղվի դեպի առևտրային բլոկի մաս կազմող երկրի մատակարարը, որի ապրանքը մոտ է համաշխարհային ամենաէժան գնին: Մաքսային միության ձևավորումը պետք է հանգեցնի արտադրության վերաբաշխման և վերակազմակերպման՝ առավելագույնի հասցնելու օգուտները մաքսային միությունից: Թերևս այս է պատճառը և սրա մասին է վկայում հաջողված մաքսային միությունների փորձը, որ երկրները ձգտում են ավելի սերտ միասնացման, քանի որ ընդհանուր շուկայի ստեղծման, առավել ևս տնտեսական միության դեպքում ներդաշնակեցված կամ միասնական առևտրային քաղաքականություններով անդամ երկրները առավելագույն օգուտ կստանան մաքսային միությունից: Ինչ վերաբերում է Եվրասիական տնտեսական միությանը, ապա անդամ երկրների միջև առևտրի ապրանքային կառուցվածքում անհրաժեշտ բազմազանության պակասը նվազեցնում է անդամ պետությունների փոխլրացման մակարդակը՝ հաճախ նրանց դարձնելով մրցակիցներ նույնատիպ ապրանքային շուկաների համար պայքարում¹⁰: Ուստի կառույցի համար ռազմավարական կարևորագույն նշանակություն ունի միասնական առևտրային քաղաքականության մշակումը, որը նպատակաուղղված կլինի երկրների մասնագիտացման և մրցակցային առավելությունների իրացմանը:

Քաղաքականության համակարգման ավելի բարձր մակարդակը՝ «կոշտ» տարբերակը, նպաստում է միասնական քաղաքականության, կառուցվածքների և համակարգերի ձևավորմանը, ապահովում է երկրների ավելի խոր ինտեգրում, հանգեցնում է առանձին տնտեսությունների տարբեր ոլորտների միաձուլման և միասնացման նոր որակի՝ ստեղծելով վերաբնակային կանոններ, քաղաքականություններ, կառուցվածքներ և մեխանիզմներ ինտեգրման տարածքում¹¹: Սրա շնորհիվ ինտեգրման Եվրասիական մոդելում առևտրի ստեղծման համար ավելի լայն հնարավորություններ են ընձեռվում:

Ավելի խոր տնտեսական ինտեգրման ճանապարհ է բռնել նաև Հայաստանի Հանրապետությունը՝ դառնալով Եվրասիական տնտեսական միության անդամ: Փոքր երկրների համար, ինչպիսին Հայաստանն է, ինտեգրումը խոստանում է դառնալ երկարատև տնտեսական աճի ապահովման երաշխիք¹²: Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ջանքերով, միջազգային լավագույն փորձի կիրառմամբ, ստեղծվել են անհրաժեշտ մարմիններ ու ինստիտուտներ՝ ապահովելու միասնացման այս գործընթացի արդյունավետ ընթացքն ու զարգացումը: Միության տնտեսական քաղաքականության գրագետ մշակումից և անդամ երկրների հավաքական ներուժից է կախված ինտեգրման գործընթացի հաջողությունը:

¹⁰ Տե՛ս Ա.Մարգարյան, Ս.Սոլոդովնիկով, Դ.Գալոյան, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տնտեսությունների մրցունակության համեմատականը, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 9-10 (171-172), 2014, էջ 65:

¹¹ Տե՛ս **Зуев В.**, Методология классификации и оценки форм региональной интеграции, Евразийская экономическая интеграция, 2014, 3 (24), էջ 33:

¹² Տե՛ս Մելքումյան Ս. և ուրիշներ, ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում, «Ամբերդ» մատենաշար, Երև., «Տնտեսագետ», 2015, էջ 8:

ДАВИД ДИЛАНЯН

Аспирант кафедры “Финансов и экономики”
Российско-Армянского (Славянского) университета

Экономическая интеграция и ее социально-экономические эффекты. – Региональные интеграционные процессы получили импульс в последние десятилетия, привлекая все новые страны. Причины интеграции и ожидания от этих процессов очень разные и соответственно страны выбирают наиболее предпочтительные институциональные формы интеграции. Основная выгода от экономической интеграции является ее влияние на благополучие страны.

При анализе социально-экономических последствий интеграционных моделей, используются два понятия, предложенные экономистом Джекобом Вайнером: «Создание торговли» и «Отвлечение торговли». Исходя из вышеизложенного в работе рассматриваются преференциальные торговые схемы и их влияние на благосостояние стран. В частности, этот вопрос нами исследован с помощью классических моделей преференциальной либерализации.

Ключевые слова: экономическая интеграция, региональные торговые соглашения, создание торговли, отвлечение торговли, влияние на благосостояние, социально-экономические последствия, таможенный союз, зона свободной торговли, соглашения о преференциальной торговле.

JEL: I31, R59, F40, F13, F15

DAVIT DILANYAN

Post-graduate at the Chair of “Finance and Economy” of
Russian-Armenian (Slavonic) University

Economic Integration and Its Socio-Economic Effects.

The regional integration processes have gained an impulse during recent decades engaging various countries of different scale. The reasons for such integration and the expectations from these processes have been diverse, and accordingly states have chosen the most preferable institutional form of the integration. The major benefit from economic integration is the welfare that the country is going to gain.

When analyzing the welfare effects of the integration models, the two popular ideas introduced by economist Jacob Viner are commonly used: “Trade Creation” and “Trade Diversion”. Proceeding from the above-mentioned, preferential trade arrangements and their welfare effects on countries while utilizing the classic models of preferential liberalization are examined in the given paper.

Key words: economic integration, regional trade agreements, trade creation, trade diversion, welfare effects, customs union, free trade area, preferential trade agreements.

JEL: I31, R59, F40, F13, F15